Հետազոտական աշխատանք

Տիտղոսաթերթ

Կազմակերպության տվյալներ • Անվանում, հասցե • Տնօրեն • Էլ.հասցե • Հեռախոս	«Մասնակցային դպրոց» կրթական հիմնադրամ Վահրամ Սողոմոնյան masnakcayindproc@gmail.com
Հետազոտության թեմա/վերնագիր ❖ Հետազոտության թեմա	Միջառարկայական կապերի ապահովումը ավագ դպրոցում Հովհ. Ծիրազի «Կտակ » բանաստեղծությունն ուսումնասիրելիս:
Ուսուցչի տվյալներ • Ա.Ա.Հ. • Մասնագիտություն • Հեռախոս • Էլ. հասցե • Դասավանդվող առարկաներ • Դասարաններ	Հայկանուշ Արտաշի Փաշյան բանասեր-մանկավարժ հայոց լեզու, հայ գրականություն 10-րդ, 11-րդ, 12-րդ
Ուսումնական հաստատության տվյալներ • Անվանումը, հասցե • Հեռախոս • Էլ. հասցե (տնօրենության) • Web կայքի հասցե	Երևանի Գ. Էմինի անվան թիվ 182 ավագ դպրոց հիմնադրամ Կորի 55 /010 /54-00-10 shcool182@schools.am 182imdproc.am

Բովանդակություն

Ներածություն---------- էջ 2-4
Գրականության ակնարկ---------- էջ 5-7
Հետազոտության մեթոդները----------էջ 7-8
Հետազոտության ընթացքը---------- էջ 8-15
Եզրակացություն---------- էջ 16-17
Գրականության ցանկ----------էջ 18
Հավելված---------- էջ 19

Ներածություն

Նպատակը եւ հետազոտական հարցը	Արդյունավետ է արդյոք միջառարկայական կապերի կիրառումը 12-րդ դասարանում Հովհաննես Շիրազի «Կտակ » բանաստեղծությունն ուսումնասիրելիս:
Թեմայի կարեւորությունը եւ նշանակությունը Ձեր/թիրախային խմբի համար	Ներածություն Կյանքը հարափոփոխ ընթացք է, հետևաբար՝ մեկտեղ առաջադրվում են թելադրականներ, որոնք պիտի ապահովեն յուրաքանչյուր ոլորտի արդյունավետ զարգացումն ու բնականոն ուղին: Կրթությունը խիստ կարևորվող կենսական անհրաժեշտություն է յուրաքանչյուր անհատի կայացման

հանապարհին , ուստի չի կարող դոփել միևնույն տեղում , այլապես կդիտվի ժամանակավրեպ: Նոր ասելիքով, նոր պահանջներով ու նոր խոսքով ուղիներ ենք հարթում կրթության ոլորտում ըստ արժանվույն հանդես գալու համար: Նորարարական մոտեցումները դասի խթան են հանդիսանում սովորողի համար ուսումնառության ընթացքում և, բնականաբար, նպատակից զատ վերջնարդյունքը լինում է գոհացուցիչ թե՛ սովորողի, թե՛ ուսուցչի համար : Կնշանակի՝ դասը ստացվել է....

Ինչ խոսք, ավագ դպրոցում , ելնելով սովորողի տարիքային առանձնահատկություններից, դասի մոտեցման ձևը փոքր–ինչ այլ է, հետաքրքրություն առաջացնելն էլ սովորողի մոտ՝ ոչ այնքան դյուրին: Ուստի ուսուցիչը մշտապես նորի փնտրտուքի մեջ է՝ նյութի մատուցման , մոտիվացիայի, ակնկալիքների արդարացման հետ կապված:

Ժամանակին մեծն Յ. Ա. Կոմենսկին իր «Մեծ դիդակտիկա» աշխատության մեջ իրավամբ առաջ է քաշել հետևյալ միտքը. «Ամեն ինչ ամրապնդել բանականության հիմունքներով նշանակում է ամեն ինչ սովորել՝ մատնացույց անելով պատճառները, այսինքն՝ ոչ միայն ցույց տալ, թե ինչպես է այս կամ այն բանը տեղի ունենում, այլ նաև ցույց տալ, թե ինչու դա այլ կերպ լինել չի կարող: Չէ՞ որ իմանալ որևէ բան, նշանակում է իրը ճանաչել իր փոխկապակցվածության մեջ [1]»: Միջառարկայական կապերը ուսուցման գործընթացում իրականացվում են մեթոդաբանական, կրթական, զարգացնող, դաստիարակչական , կառուցողական գործառույթները: Ուսուցիչը միջառարկայական կապերի միջոցով նպաստում է սովորողների գիտելիքների ինտեգրմանը , բազմակողմանի զարգացմանը, ինտելեկտի կատարելագործմանը, մտահորիզոնի ընդարձակմանը : Սովորողներին շրջապատող աշխարհի մասին հնարավորինս բազմակողմանի ու ընդարձակ տեղեկություններ տալը, ուրիշ գիտելիքների հետ կապի մեջ դնելը, դրանք շրջանառության մեջ պահելը կարևոր

	ու վճռորոշ նշանակություն ունի երեխաների աշխարհանճանաչողության համար: Այսպիսով՝ հանրակրթական դպրոցում աշխատող յուրաքանչյուր ուսուցիչ պարտավոր է ոչ միայն գերազանց տիրապետել իր մասնագիտությանը որպես մանկավարժ, այլև որոշակիորեն հարել այլ առարկաների: Միջառարկայական կապերի օգտագործումը պետք է դառնա միջոց հիմնական նպատակին հասնելու համար: 1. «Մեծ դիդակտիկա» / Յ. Ա. Կոմենսկի, Թարգմ.՝ Մ.Ե. Մարտիրոսյան, Վ.Խ. Հարությունյան, Ս.Ս. Մարկոսյան
Ո՞ր առանցքային կոմպետենցիային/կարողունակության ն է ուղղված նպատակի ուսումնասիրությունը	Լեզվական գրագիտության Սովորել սովորելու Ինքնաճանաչողության և սոցիալական հարաբերությունների
Վերապատրաստման ո՞ր թեմայի շրջանակում է անդրադարձ կատարվել այս հիմնախնդրին/ոլորտին	Առարկայի դասավանդման մեթոդիկա

Պարագրաֆներ/մասեր

Գրականության ակնարկ ● Մեջբերումներ արդեն արված հետազոտություններից,	Գրականության ակնարկ

• Մեջբերումներ գրականությունից, տեղեկության վստահելի աղբյուրներից: <u>Պարտադիր է կատարել հղում աղբյուրին</u>	Միջառարկայական կապը աշակերտի համար դաստիարակությանը խթանող միջոց է : Այդ կապերի իրագործումը զարգացնում է տրամաբանական մտածողությունը, նպաստում ճանաչողական կարողությունների ակտիվացմանը, հնարավորություն ստեղծում տարբեր առարկաներից ձեռք բերել նոր տեղեկություններ կամ գիտելիքներ նյութական աշխարհի օրինաչափությունների մասին և համադրել դրանք ուսումնասիրվելիք նյութի հետ: Արժանահիշատակ շատ մանկավարժներ դեռ ժամանակին վեր էին հանում միջառարկայական կապերի անհրաժեշտությունը: Նրանցից Ի. Դ. Զվերևը և Վ. Ն. Մակսիմովը փաստում էին . «Կրթության ժամանակակից գործընթացների զարգացման և ճանաչողական գործունեության իրականացման գործում ամենակարևոր գործոնը միջառարկայական կապն է, որը ցուցաբերում է բազմակողմանի ազդեցություն կրթական գործընթացների վրա »: Իսկ Կ. Դ. Ուշինսկին, Ն. Կ. Կրուպսկայան ընդգծում էին ուսումնական առարկաների միջև միջառարկայական կապերի անհրաժեշտությունը՝ բնության մասին գիտական և ամբողջական պատկերի, իրական գիտելիքների և ճիշտ աշխարհընկալման ձևավորման գործում: Աշակերտներին օգնել իրենց շրջապատող աշխարհը լիարժեքորեն ճանաչելու, արժևորելու, ընկալելու , բազմակողմանի տեղեկություններ տալը, այլ գիտելիքների հետ համադրելը նշանակալից է և վճռորոշ նրանց աշխարհաճանաչման ճանապարհին : Ինչի միջոցով դրսևորվում է սովորողի ճանաչողական ակտիվությունը , զարգանում է գեղագիտական ճաշակը, խթան է հանդիսանում երևակայության զարգացման համար, զանազան կարողունակությունների բացահայտման , ինչպես նաև ինքնատիպ և ուրույն մտածելակերպի և ստեղծագործական մտքի թռիչքի երևան գալու համար: Ժամանակակից ուսուցիչն այսօր որոշակիորեն ազատ է իր տիրույթում դասի վարման համար համապատասխան ձևեր և միջոցներ ընտրելիս, միևնույն ժամանակ, ինարկե, հավատարիմ մնալով պետական չափորոշչային

դրույթներին: Եվ ճիշտ, տեղին ու հետաքրքրող տիրույթը ստեղծում է նպաստավոր միջավայր ուսուցիչ–աշակերտ համատեղ աշխատանքի արգասավոր ու արդյունավետ վերջնարդյունք գրանցելու համար: Ի վերջո, առողջ մթնոլորտը դասարանում , ճիշտ ընտրված գործիքակազմը և դասի անցկացման մեթոդները գիտելիքից զատ աշակերտին ներշնչում են հավատ սեփական ուժերի նկատմամբ, տալիս են ինքնագնահատականի բարձրացում և, ինչու չէ, շատերին ձերբազատում թերարժեքության բարդույթից : Այս բոլորի նրբանկատորեն ապահովման պարագայում դասը միանշանակ ծառայում է իր նպատակին ու դառնում հիմնաքարերից մեկը անձի կատարելագործման անցնելիք ճանապարհին, լինել ուղենշային անհատի ձևավորման գործընթացում, որն էլ դպրոցի կարևոր հիմնախնդիրներից է...

Հետազոտության մեթոդները

Գիտությունը զարգանում է նորանոր փաստերի համալրումով, իսկ դրանց մեկնաբանման , մատուցման ու դրսևորման համար պիտի կիրառվեն համապատասխան մեթոդներ, որոնց միջոցով իրականանալի կլինի ծրագրածը: Համակարգված մոտեցումը պահանջում է մանկավարժական փորձի, տեսության, պրակտիկայի միասնության սկզբունքի կիրառում: Միջառարկայական կապերը համարվում են ուսումնական գործընթացի կարևոր պայման և միջոց, հետապնդում են նպատակ և խնդիրներ, պարունակում են մեթոդներ, միջոցներ և ձևեր՝ խորը և բազմակողմանի գիտելիքների ուսումնասիրման, գիտելիքների խորացման, , ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունավետ իրականացման, գիտական աշխարհայացքի ձևավորման, տրամաբանական մտածողության զարգացման համար :

Վերոհիշյալի հետքերով որոշեցի դիտարկել միջառարկայական կապերի ստեղծման արդյունավետությունը հայ գրականության դասընթացին

12-րդ դասարանում Հովհ. Շիրազի «Կտակ» բանաստեղծությանն անդրադառնալիս:

Պարզելու համար , թե արդյունավետ է արդյոք միջառարկայական կապերի ստեղծումը տվյալ դասի շրջանակներում, և ապահովում է առավել արդյունավետություն, որոշեցի երկու զուգահեռ 12-րդ դասարաններում միևնույն թեման մատուցել ավանդական դասի ձևաչափով և միջառարկայական կապերի ստեղծումով /երկու դասարանների ներկայացուցիչներ փոխադարձաբար միմյանց դասին ներկա գտնվելու պայմանով / , որի շուրջ արված դիտարկումներին աշակերտների հետ, կանդրադառնամ ինչ ավելի ուշ:

Ուշադրության եմ ուզում արժանացնել միջառարկայական կապերի ստեղծումով անցկացրած դասը և վեր հանել առավելությունները:

Հետազոտության ընթացքը

Դասն անցկացրել եմ 12 -րդ դասարանում՝ բաղկացած 25 աշակերտից: Նպատակահարմար գտա ծրագրածս իրականացնել իրար հաջորդող երկու դասաժամերի ընթացքում՝ հաշվի առնելով ընդարձակ ծավալը: Դասի թեման էր Հովհաննես Շիրազի «Կտակ» բանաստեղծությունը: Նպատակն էր ՝

խթանել երևակայության դրսևորումը

- նյութեր գտնել տարբեր աղբյուրներից, յուրովի վերաշարադրել դրանք
- արտահայտել սեփական տեսակետը նյութի բովանդակության շուրջ
- նկատել և մատնանշել տարբեր առարկաների միջև գոյություն ունեցող կապերը
- զարգացնել գեղագիտական հաշակը
- դրսևորել երևակայություն և ստեղծարարություն

Մինչ բուն նյութի ուսումնասիրումը սովորողներին էլեկտրոնային գրատախտակին ներկայացվեցին բանալի

պատկերներ, որոնք հնարավորություն կտային գուշակել բանաստեղծության վերնագիրն ու հեղինակին:

Փորձեք գուշակել

Ո՞վ է հեղինակը :

Ո՞ր բանաստեղծությունն եք այսօր ուսումնասիրելու:

Արարատապատությունը Թիրազին բնորոշ հատկանիշ էր , խիստ ծանրակշիռ լեռան անգնահատելի ու անհամեմատելի լինելը որևէ տեսակի գանձի հետ՝ ասածի վառ ապացույցը , ինչը օգնեց սովորողներին անմիջապես գուշակել բանաստեղծության վերնագիրը :

Արարատի տարաբնույթ պատկերումներով բանաստեղծը տալիս է ազգային կյանքի էության խորհրդանիշը:

Դասի թեմայի՝ միացյալ ուժերով պարզաբանումից հետո ընթերցվում է բանաստեղծությունը համապատասխան հնչերանգով՝ ընկալումն ապահովելու միտումով կամ միացվում է ձայնագրությունը:

https://www.youtube.com/watch?v=oIgKUCOEuBE&t=7s

Հաջորդիվ մոդալության աղյուսակի միջոցով փորձում ենք վերարտադրել ստեղծագործության ընկալումը զգայարաններով:

Պատկեր	Ձայն	Զգացողություն
Ի՞նչ պատկերներ էի տեսնում բանաստեղծությունը կարդալիս:	Ի՞նչ ձայներ էի լսում բանաստեղծությունը կարդալիս:	Ի՞նչ էի զգում բանաստեղծությունը կարդալիս

Սովորողները մեծ ոգևորությամբ ու ջանասիրաբար միմյանց հետ կիսվեցին ստեղծագործության պատկերի, ձայնի և զգացողության իրենց ընկալումներով , մոտեցմա ն ձևերով և դրանք ներկայացրին աղյուսակով:

Բանաստեղծության ընկալումը հաղթահարելուց հետո միայն կարելի է խորամուխ լինել նրա բովանդակային ու գաղափարական խորքերը վեր հանելուն:

Դրանում իր ուրույն դերակատարումը կունենա միջառարկայական կապերի ստեղծումը:

Դասարանի աշակերտների թվաքանակը 21 է: Խմբային հետազոտության իրականացման համար դասարանը բաժանում ենք 10 խմբերի / սովորողներից մեկը օգնում է ուսուցչին համակարգման աշխատանքներում և արդյունքներն ամփոփելիս / : Տրվում են խմբային առաջադրանքներ՝գրված թերթիկների վրա, որոնց կատարման հետ կապված մանրամասներ տալիս է ուսուցիչը՝ անհատական մոտեցում ցուցաբերելով յուրաքանչյուր խմբին:

Եվ այսպես՝

1-ի խումբ- պատմաբաններ
կատարել պատմական էքսկուրս՝անդրադառնալով Հայաստանի պատմական տարածքին, ամբողջականությանը , այսօր արդեն երկփեղկվածությանն ու մասնավորապես Արարատ լեռան առեղծվածին ՝ ինչն անմիջականորեն առնչակից է բանաստեղծությանը,
անցյալի և ներկայի զուգահեռներ անցկացնել

2-րդ խումբ-աշխարհագրագետներ
տալ մանրամասներ Արարատ լեռան տեղակայման, դիրքի , լեռանը հարակից տարածքների, Արարատյան դաշտավայրի բնակլիմայական պայմանների , կենսական նշանակության հետ կապված

3-րդ խումբ - բանաստեղծներ
գրել բանաստեղծի մենախոսությունը՝ վեր հանելով հոգեվիճակը, հույզերն ու

ապրումները, բանաստեղծության գրության շարժառիթը

4-րդ խումբ - մաթեմատիկոսներ
նշել Մեծ և Փոքր Մասիսների բարձրությունները, հաշվարկներ կատարել ստորոտից գագաթ հասնելու ժամանակահատվածի հետ կապված, հիշել՝ ովքեր են Արարատ բարձրանալու փորձեր կատարել

5-րդ խումբ - նկարիչներ
նկարազարդել բանաստեղծությունը գրքում զետեղելու համար, տալ անհատական մոտեցմամբ լուծումներ

6-րդ խումբ – երգահաններ
բանաստեղծության բառերով երգ գրել, հիշել Արարատ սարին նվիրված այլ բանաստեղծություններ, որոնց բառերի հիման վրա գրվել են երգեր, մտաբերել կատարողներին

7-րդ խումբ – թատերասերներ

մնջախաղի արվեստի դրսևորմամբ բեմադրել բանաստեղծությունը՝ ապրումակցելով բանաստեղծին, ոչ բառային հաղորդակցման միջոցներով վերարտադրելով հույզերը

8-րդ խումբ – բանասերներ

վեր հանել ստեղծագործության
գաղափարական խորքը,
մատնանշել պատկերավորման
միջոցները՝ հիմնավորելով
օրինակներով, կարևորել մայրենի
լեզվի դերը սեփական խոհերը,
մտածումները գրագետ և
հասկանալի ձևակերպելու գործում

9-րդ խումբ – թարգմանիչներ

բանաստեղծությունը թարգմանել
ռուսերեն և անգլերեն լեզուներով՝
հավատարիմ մնալով բնագրին

10-րդ խումբ – կենսագիրներ

պարզել մանրամասներ՝ կապված
Շիրազի կենսագրության հետ, որոնք
անմիջականորեն առնչակցվում
էին «Կտակ» բանաստեղծությանը,
իրականացա՞վ արդյոք Շիրազի
վաղեմի երազանքը

Տրվեց ժամանակ առաջադրանքները կատարելու , մտքերն ի մի բերելու, հավուր պատշաճի ներկայանալու համար, քանզի մատուցման ձևը ոչ պակաս կարևոր է հետաքրքրականի փնտրտուքից զատ:

Աշակերտների կողմից հակիրճ ներկայացվեց առաջադրանքների կատարողականը : Ամփոփ, բովանդակալից եզրայթներ ստացվեցին : Հաճելիորեն արդյունքը գերազանցեց սպասվածին: Դրսևորվեցին աշակերտների չբացահայտված կարողունակությունները ու հմտությունները: Տեղեկատվության տարափ էր՝ բազմակողմանիորեն լուծումներ ստացած՝ խոսքի հմտություն, դերասանի վարպետություն, վրձնահարվածների յուրօրինակություն,

	մտածելակերպի բացառիկ դրսևորումներ: Նույնիսկ ամենաթույլ կարողություններով աշակերտները հետաքրքրված էին , ներգրավված ու ջանում էին ետ չմնալ մյուսներից: Դասի յուրացումը լիարժեքորեն ստացվեց միջառարկայական կապերի արդյունավետ կիրառումով:
Օգտագործված մեթոդները, գործիքները	Խմբային հետազոտություն Ջանգվածային հարցում Հարցաթերթիկ Մոդալության աղյուսակ
Իրականացման ժամանակահատվածը	2022թ. 06. 09 -10.09
Թիրախ խումբը և շրջանակը /քանակ, սեռային բաշխում/	12 -րդ դասարան , 21 աշակերտ ՝ 11 տղա, 10 աղջիկ

Եզրակացություններ, առաջարկություններ

Վերհանված արդյունքներ, եզրակացություններ, պատասխան հետազոտական հարցին	Յուրաքանչյուր դասի հաջողության գրավականն, ըստ իս, դասի համատեքստում առաջադրված խնդիրների ու դրանց ֆաղաքակիրթ լուծման, ինչ խոսք, դրանց կատարողականության սահուն և անխոչընդոտ ընթացքի ապահովման, կրթության որակի բարելավմանն ընդառաջ ուսուցիչը պիտի փորձի նորարար լինել՝ ելնելով դասարանի բարոյահոգեբանական նկարագրի առանձնահատկություններից, պահի թելադրականով պայմանավորված , որն էլ կապահովի գոհացուցիչ վերջնարդյունք ուսուցիչ–աշակերտ թիրախային խմբերի համար: Վերը նշված անցկացրած դասի շրջանակներում, զուգահեռաբար օգտագործելով ավանդական դասի ձևաչափն ու միջառարկայական կապերի կիրառմամբ տարբերակը, սովորողներին տրված հարցաթերթիկների միջոցով, որոնց հարցադրումներն էին՝ որքանո՞վ նպաստավոր եղավ միջառարկայական կապերի կիրառումը դասի յուրացման համար նման ձևաչափով անցկացված դասը նախընտրելի՞ էր ավանդական դասի տիպից / հիմնավորել / ի՞նչ տվեց միջառարկայական կապերի կիրառումը պարզեցինք, որ միջառարկայական կապերի բոլոր ֆունկցիաների արդյունավետ և միաժամանակյա կիրառումը հնարավոր է իրականացնել ինտեգրված դասերի միջոցով, ինչը, միանշանակ, խթան է հանդիսանում ցանկալի ու համապարփակ տեղեկատվությամբ լեցուն դասի ապահովման համար:

	Դիտարկումների արդյունքում եկանք այն եզրակացության, որ միջառարկայական կապերը նպաստեցին , որ աշակերտը , ձերբազատվելով բարդույթներից, փնտրտուքի արդյունքում լսարանի առջև ներկայանա սահուն, համոզիչ ու ինքավստահ խոսքով , անկաշկանդ դրսևորի ստեղծագործական մտքի թռիչքներ ու անսպառ երևակայություն , վերարտադրի կարդացածը յուրովի մեկնաբանություններով, մատնանշի զանազան առարկաների միջև առկա կապերը և այդ ստացած ամբողջ տեղեկատվությունն ամբարի իր մեջ ՝ անցնելիք ճանապարհին իր գիտելիքի շտեմարանից դուրս բերելու և որպես փարոս ծառայեցնելու համար:
Այլ տեղեկատվություն	

Օգտագործված գրականության ցանկ (1-2 էջ)

1. Մանկավարժության և հոգեբանության հիմնախնդիրներներ, 2016թ
2. Ա. Եղիազարյան, Հայ գրականություն, Երևան, Մանմար , 2011
3. ՈՒսուցման ժամանակակից մեթոդներ, հնարներ, վարժություններ, ԿԱԻ 2008թ.
4. ՀՀ կրթության և գիտության նախարարություն, Խ.Աբովյանի անվան

պետական մանկավարժական համալսարան , Մագիստրոսի կրթական ծրագիր, Երևան, 2010թ.

5. Յ. Ա. Կոմենսկի, « Մեծ դիդակտիկա» / թարգմ.՝ Մ. Ե. Մարտիրոսյան, Վ. Խ. Հարությունյան, Ս. Ս. Մարկոսյան /
6.

Հավելվածներ

Հաշվետվության կցված նյութեր

- Հետազոտության գործիքներ (հարցաթերթիկներ կամ այլ)
- Նկարներ
- Արդյունքներ